

Ելենա ԵՐՁՆԿՅԱՆ
Դիանա ՄՈՎՍԻՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՀԱՍԿԱՑՈՒՄ, ՄՏԱՎՈՐ ՇԱՐԺՈՒՄ, ՑՈՒՑԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում հասկացում արտահայտող բայերը դիտարկվում են որպես մտավոր շարժում արտահայտող բառեր: Որոշարկվում է այդ բայերի հասկացման մակարդակը և հիմնավորվում է բայերի ցուցայնությունը՝ հաշվի առնելով դրանց հատուկ ուղղահայաց շարժման իմասկն, ինչպես նաև հասկացման մակարդակն ընդունելով որպես մտավոր շարժման ցուցայնության կենտրոն:

Բանալի բառեր. էմպատիա, հասկացում, հասկացման մակարդակ, հասկացման խորություն, ցուցայնություն, ցուցայնության կենտրոն, մտավոր շարժում, ուղղահայաց շարժում, ճշմարտություն, ճանաչողական փոխաբերություն

Սույն հոդվածում, ելնելով ճանաչողական փոխաբերության դրույթներից, *empathize, fathom, penetrate, bottom, dig, reach* հասկացում արտահայտող բայերն ուսումնասիրվում են ուղղահայաց շարժման դիտանկյունից:

Հաշվի առնելով տվյալ բայերի իմաստային կառուցվածքում ուղղահայաց շարժման իմասկի առկայությունը՝ սահմանվում է հասկացում արտահայտող այս բայերին բնորոշ հասկացման մակարդակը՝ դրանք դասելով ցուցայնություն արտահայտող լեզվամիավորների շարքին:

Հայտնի է, որ որպես լեզվական կարգ, ցուցայնությունը հատուկ է բոլոր լեզուներին: Այն սահմանվում է որպես ցուցում որևէ ելակետի (անձի, երևույթի, տեղի, ժամանակի և այլն), որոնց նկատմամբ կատարվում է անվանարկում: Այդ ելակետը՝ ցուցայնության կենտրոնը, ցուցայնական միավորներին բնորոշ կարևորագույն հատկանիշներից է, որը Կ. Բյուլերն անվանում է **Origo**: Origo-ն այն ուղեմիջն է, որի նկատմամբ տեղի է ունենում մարդու կողմնորոշումը տարածության և ժամանակի մեջ /Bühler, 2011; Ерзинкян, 2013: 85-86/:

Հայտնի է, որ ցուցայնությունը բնորոշ է մի շարք տարածական շարժում արտահայտող բայերի, ինչպես օրինակ՝ *come, go, move, achieve, climb, cross, abandon, enter, export, fall, follow, jump, leave, pass, travel, send, bring, take, depart, leave, arrive, approach, return* և այլն /Ерзинкян, 1988: 65-70; Апресян, 1995: 641-643/: Սույն հոդվածում շարժման գաղափարը դիտարկվում է իր ամենալայն իմաստով: Արտահայտվելով այլ բառերով՝ շարժումն «ընդգրկում է տիեզերքում տեղի ունեցող բոլոր փոփոխությունները՝ ամենապարզ տեղաշարժից մինչև մտածողություն» /Ерзинкян, 2013: 234/: Այդ իսկ պատճառով հոդվածի շրջանակներում ուսումնասիրվող բայերով արտահայտված գործողությունները կարելի է փոխաբերաբար նկարագրել որպես մարդու շարժումը դեպի գիտելիք, տեղեկություն, ճշմարտություն: Դրանք նույնպես արտահայտում են շարժում, սակայն այս շարժումը ֆիզիկական շարժում չէ. այն վերացական է, մտավոր:

Մտավոր շարժման ուղենիշը (ցուցայնության կենտրոնը) տվյալ դեպքում ճշմարտությունն է: Եվ որպես ցուցայնական բայեր՝ ուսումնասիրվող բայերով արտահայտված հասկացման տարբեր ձևերը հարաբերակցվում են ցուցայնության կենտրոնի՝ գործողության վերջնակետի՝ «ճշմարտության» բացահայտման հետ՝ ըստ այդմ ունենալով հասկացման տարբեր մակարդակներ: Կարևոր է նշել, որ ցուցայնական միավորները սկզբունքորեն կարող են ունենալ ցուցայնության երկու կենտրոն /Ерзикаян, 2013: 356-357/: Ուսումնասիրվող բայերի դեպքում հասկացման ամբողջ գործընթացը միաժամանակ հարաբերակցվում է ցուցայնության երկու ուղենիշների հետ՝ ճշմարտության և ճշարտության բացահայտման մասնակի դրսևորումների հետ: Այս համատեքստում ճշարտությունն անվանենք ցուցայնության կենտրոն₁ (Origo₁): Ցանկացած հասկացման վերջնական նպատակը ճշարտության ամբողջական բացահայտումն է, սակայն երբեմն այն սահմանափակվում է իմաստի, էության, առանցքային գաղափարների հասկացմամբ. այս դեպքում առնչվում ենք ճշարտության մասնակի բացահայտմանը: Այսպիսով, փոխաբերական շարժում արտահայտող այս բայերի ցուցայնությունը որոշարկվում է նաև մեկ այլ կետի հարաբերակցությամբ՝ հասկացման մակարդակն ուրվագծող նշողներն ընդունելով որպես վերացական տարածական իրականության մեջ տվյալ մտավոր շարժման վերջնակետի դիրքը սահմանող ցուցիչներ: Այդ կետը պայմանականորեն անվանենք ցուցայնության կենտրոն₂ (Origo₂):

Նշված բայերի ցուցայնությունը դիտարկվում է՝ վերաիմաստավորելով շարժման գաղափարը: Դա նշանակում է, որ հասկացման ամբողջ գործընթացը հարաբերակցվում է տարբեր նշողների հետ. գործողության ելակետից մինչև վերջնակետն ընկած ուղու երկարությունը, որն արտահայտվում է հասկացման խորությունն արտահայտող մակբայներով ու մակբայական արտահայտություններով, մտավոր շարժման ուղղվածությունը մատնանշող նախդիրներով: Անդրադառնալով նշված կետերի քննարկմանն ավելի մանրամասնորեն:

Հասկացման մակարդակը սահմանելու համար նախ պետք է որոշել, թե տվյալ բայով արտահայտված գործողության ավարտին գործողության սուբյեկտն ինչ չափով է «հանգել» ցուցայնության կենտրոնին (Origo₁)՝ ճշմարտությանը:

Դա ենթադրում է, որ հասկացման մակարդակը նախանշվում է նաև հասկացում արտահայտող բայերի՝ հաստատական և ժխտական նախադասություններում գործածության հաճախականությամբ: Հասկացում արտահայտող բայի՝ ժխտական նախադասություններում կիրառությունը վկայում է հասկացման մակարդակի «բացակայության» մասին: Այս առումով «ժխտական» են համարվում նաև բոլոր այն նախադասությունները, որտեղ առկա է իմաստային ժխտումը: Այդպիսի դեպքերում բային նախորդում են *hard, difficult, not easy, fail* և այլ մմանատիպ բառեր: Մյուս կողմից, «հաստատական» նախադասությունների շարքին չեն դասվում այն նախա-

դասությունները, որտեղ հասկացում արտահայտող բային նախորդում են *must, will, would, have to, try, attempt, intend, want, wish, desire, aim, promise, help* և նմանատիպ այլ «ապագայակենտրոն» բայեր, քանի որ այդ բայերի առկայությունը որոշ չափով բացառում է հասկացման գործընթացի իրականացումը: Հետևաբար «հաստատական» են համարվում այն նախադասությունները, որտեղ հասկացման մակարդակն ուղղակիորեն է արտահայտված:

Ուսումնասիրվող բայերն էմպատիայի տարբեր դրսևորումներ են: Ինչպես հայտնի է, էմպատիան ցանկացած տեսակի հասկացման հիմքն է, այն յուրաքանչյուր միջմշակութային և ներմշակութային հաղորդակցության հաջողության կարևորագույն նախապայմաններից է: Գրականության մեջ էմպատիան սահմանվում է որպես խոսողի նույնականացում մեկ այլ անձի, հասկացության, երևույթի հետ, ինչը կարող է դրսևորվել տարբեր աստիճանով /Croft, Cruse, 2004: 61-63; Kuno, 1987: 206/: Էմպատիայի՝ այս կամ այն աստիճանով արտահայտվածությունը բնորոշում է հասկացման մակարդակը, հետևաբար այն հատուկ է հասկացում արտահայտող բառերին:

Հոդվածում *fathom, penetrate, bottom, dig, reach* բայերի միջոցով արտահայտված հասկացումը հարաբերակցվում/համեմատվում է *empathize*-ի բայի հետ: Նշենք, որ ուսումնասիրությունը հիմնված է Բրիտանական ազգային կորպուսում (British National Corpus – BNC) տեղ գտած համատեքստերի ու անգլերենի մի շարք հեղինակավոր բացատրական բառարանների սահմանումների վրա (տե՛ս ցանկը): Նշված բայերն ուսումնասիրվում են որպես առանձին միկրոդաշտ՝ պայմանավորված այն փաստով, որ հասկացում արտահայտող այս բայերին հատուկ է ուղղահայաց՝ մարդուց դեպի ճշմարտությունը շարժման իմաստային հատկանիշը:

Սկզբում անդրադառնանք *empathize* հասկացում արտահայտող բայի որոշ առանձնահատկությունների՝ նպատակ ունենալով բացահայտել գործողության ավարտին գործողության սուբյեկտի (որը նաև ցուցայնության սուբյեկտն է) հեռավորությունը *Origo*-ից:

Ուսումնասիրված համատեքստերը *empathize* բայը բնութագրում են որպես *put oneself in someone else's shoes or position, put another person in yourself*. (1) Great design firms understand that innovation often comes from the capacity to *empathize* - or to *put oneself in the customer's shoes* /BNC/; (2) I am no stranger to being profiled and I truly *empathize* with anyone that has been put in that position /BNC/; (3) *Empathizing* involves, rather, *putting another person in yourself*, becoming another person's habitat /BNC/:

Որոշ համատեքստերում *empathize* բայը ներկայացվում է որպես *seeing through our eyes; feeling with our fingertips; understanding of the minds and emotions of others*:

Դատելով բերված (1), (2), (3) օրինակներից՝ *empathize* բայի գործածություններից՝ կարող ենք փաստել, որ *empathize* բայն իմաստային այս դաշտում արտահայտում է հասկացման առավելագույն մակարդակ: Ավելաց-

նենք այլ համատեքստեր, որոնք նույնպես հաստատում են, որ *empathize* բայի դեպքում հասկացումը հասնում է առավելագույն մակարդակի.

Empathize բային հատուկ հասկացման բարձրագույն մակարդակն իր արտահայտությունն է գտնում *more deeply, fully, totally, completely, genuinely, truly, really, too much, more, better, strongly, definitely* բառերի միջոցով, որոնք իրենց իսկ արտահայտած իմաստով վկայում են էմպատիայի բարձր մակարդակի մասին: Նշվածը հաստատելու համար մասնավորապես անդրադառնանք *deep, full, total* ածականների սահմանումներին՝ **deep** – *extending far down from the top or surface; situated relatively far; situated long way down from the top or surface*, **full** – *having no empty space; filled to capacity or near capacity; holding or containing as much as possible or a lot*, **total** – *complete, absolute, utter; including everything, very great or of the largest degree possible*: Բերված սահմանումները ցույց են տալիս, որ խորությունը կարող է լինել ինչպես բացարձակ (*having no empty space, filled to capacity, etc*), այնպես էլ հարաբերական, մոտավոր, համարյա բացարձակ (*relatively, near, etc*): Կարելի է եզրակացնել, որ *deeply, fully, totally* մակբայների գործածությունը *empathize* բայի համատեքստում խոսում է ինչպես բարձրագույն, այնպես էլ հարաբերական բարձր հասկացման մակարդակի մասին. (4) *That knowledge made the project all the more resonant for her and enabled her to empathize more deeply /BNC/;* (5) *“I empathize fully with that point of view”, he said /BNC/;* (6) *Those poor kids are getting picked on, and I was a geekly kid, so I totally empathized with that girl from MySpace /BNC/:*

Բերված փաստարկները ևս մեկ անգամ հաստատում են, որ *empathize* բայով արտահայտված հասկացման մակարդակը հասնում է առավելագույնի: Այլ կերպ ասած՝ *empathize* բայով արտահայտված մտավոր շարժման ավարտին ցուցայնության սուբյեկտի դիրքն ամբողջությամբ համընկնում է ցուցայնության կենտրոնի դիրքի հետ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ *empathize* բայով արտահայտված հասկացման մակարդակը նկարագրենք որպես «*չափազանց խորքային*»:

Աշխատանքի մեջ մի կողմից ուսումնասիրվում է *empathize* բայն՝ այն դիտարկելով որպես հասկացման բարձրագույն դրսևորում, մյուս կողմից՝ *fathom, penetrate, bottom, dig, reach* հասկացում արտահայտող բայերը՝ դրանք ընդունելով որպես հասկացման այլ մակարդակների նշորդներ:

Եթե *empathize* բայը մատնանշում է հասկացման առավելագույն մակարդակ, ապա *fathom* բայը այդ կերպ հնարավոր չէ միանշանակորեն բնութագրել: Նախ նշենք, որ ի տարբերություն *empathize* բայի, *fathom* բային հատուկ է իմաստային ժխտումը: Բացատրական բառարաններն այն սահմանում են հետևյալ կերպ՝ *understand (a difficult problem or an enigmatic person) after much thought*: Ուսումնասիրված համատեքստերը ցույց են տալիս, որ *fathom* բայով արտահայտված գործողությունը հիմնականում տեղի չի ունենում: Տեղի է ունենում մտքի շարժման փորձ դեպի ցուցայնության կենտրոնը, որը հաճախ ավարտվում է անհաջողությամբ: Այդ իսկ պատճառով

բացակայում է գործողության արդյունքը: *Fathom* բայը հիմնականում կիրառվում է հետևյալ բառերի համատեքստում՝ *can't, don't, pretend not to, none of us, no one, won't, were not able to, nobody, no more, no way of, hardly, hard to, difficult to, scarcely*. (7) What followed on that I have *never* completely *fathomed*; nor whether it was a thing arranged, or merely an inspiration, born of the common enthusiasm? /BNC/; (8) But he *couldn't fathom* how his parents could afford the \$11,000 out of pocket that the college asked them to pay /BNC/; (9) He breathes in the scent of her skin, still *unable to fathom* that they are husband and wife /BNC/:

Այնուամենայնիվ, տարբեր համատեքստերի քննությունը ցույց է տալիս, որ *fathom* բայով արտահայտված հասկացումը տեղի է ունենում՝ ուղեկցվելով դժվարություններով, հասանելի լինելով քիչ մարդկանց, կրելով հազվադեպ բնույթ, պահանջելով որոշ ժամանակ (10) We Americans, children of so young a country, can *barely fathom* such ineradicable grievances /BNC/; (11) But in the Democratic Part, *few* seem to be able to *fathom* she won't run /BNC/; (12) It *took* Tad *some little time to fathom* this reply and gave him some splendid mental exercise /BNC/:

Հավելենք, որ ըստ բառարանային սահմանումների՝ *fathom* բայով արտահայտված գործողությունը տեսականորեն, սակայն ոչ գործնականում, հասնում է բարձրագույն մակարդակի՝ *understand completely; deeply understand something by penetrating its profound or mystifying nature; understand thoroughly: Completely, deeply, thoroughly* բառերի գործածությունը *fathom* բայի սահմանումներում ցույց է տալիս, որ գործողության նպատակը լիարժեք, ամբողջական հասկացումն է, որը հաճախ, ինչպես վկայում է համատեքստի ուսումնասիրությունը, չի իրականանում: Մի կողմից, այս մակբայներն այն նշորդներն են, որոնց միջոցով «չափվում» է հասկացման մակարդակը, մյուս կողմից, տվյալ համատեքստերում դրանք ուրվագծում են ցուցայնության կենտրոնի (Origo₂) դիրքը: Վերջինիս հետ հարաբերակցվում է հասկացման ամբողջ գործընթացը: Հետևաբար, *not to fathom* նշանակում է *not to understand completely, deeply, thoroughly*, որը չի բացառում հասկացման որոշակի մակարդակի գոյությունը: Խորության գաղափարն արտահայտված է նաև հետևյալ համատեքստում՝ (13) *...in the recognition that your own children cannot fathom the depth of your love - you come to understand the tragic, unrequited love of your own parents* (=Not to fathom the depth doesn't presuppose not to understand at all) /BNC/:

Համադրելով *empathize* և *fathom* բայերի իմաստային հատկանիշները՝ կարելի է եզրահանգել, որ այս բայերը հասկացման երևույթի երկու կողմերն են. երկուսն էլ նախապես (ինչպես վկայում են բառարանային սահմանումները) ուրվագծում են հասկացման խորը մակարդակ: Լեզվական նյութի քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ *fathom* բայով արտահայտված հասկացման գործընթացը մեծամասամբ ավարտվում է անհաջողությամբ, մինչդեռ *empathize* բայով արտահայտված հասկացման գործընթացը հիմնա-

կանում տեղի է ունենում, ընդ որում՝ առավելագույն խորությամբ: Ուստի, *empathize* բային հատուկ է դրական առնչանակություն, *fathom* բային բացասական առնչանակություն:

Fathom բային հատուկ է ինչպես վերևից ներքև, այնպես էլ ներքևից վերև ուղղահայաց շարժում: Երկրորդ դեպքում գործողության սուբյեկտն այլ ելման կետում է գտնվում և շարժումն ունի ամբողջովին այլ ուղղվածություն. (14) ...she had found it difficult to *fathom out* the workings of Martha's mind in the days before she and her twin were married /BNC/:

Որպես ամփոփում նշենք, որ *fathom* բայով արտահայտված հասկացման խորության աստիճանը նվազագույնի է հասնում: Ցուցայնության սուբյեկտը գործողության ավարտին բավականին մեծ հեռավորության վրա է գտնվում «ճշմարտություն» ցուցայնության կենտրոնից (*Origo*₁): Ուսումնասիրված օրինակները ցույց են տալիս, որ ոչ թե տեղի է ունենում ուրվագծված ամբողջական հասկացում, այլ այն կրում է հպանցիկ բնույթ: *Fathom* բայով արտահայտված հասկացումը կարելի է բնութագրել որպես **«ոչ խորբային»**:

Այժմ անդրադառնանք *penetrate* բայով արտահայտված հասկացման իմաստագործաբանական բնութագրին: Ի տարբերություն *fathom* բայի, որի համար իմաստային ժխտումն օրինաչափություն է, նույնը չի կարելի ասել *penetrate* բայի մասին: Այն գործածվում է ինչպես իմաստային ժխտում պարունակող նախադասություններում՝ նշելու հասկացման անհաջողությունը, այնպես էլ հաստատական նախադասություններում. (15) Even this failed to *penetrate* Sien's listlessness /BNC/; (16) Eliot's play aimed to *penetrate* beyond the 'frightful' to a deeper sense of universal evil /BNC/:

Շարունակելով միտքը՝ նշենք, որ երբեմն *penetrate* բայի՝ հաստատական նախադասություններում գործածությունը չի մատնանշում, որ առկա է հասկացման որևէ մակարդակ. (17) I had, on the way back, made one more effort to *penetrate* the situation; by trying, too casually, to get him to talk about Leverrier /BNC/; (18) But then what is this habit of *trying to penetrate* to people's inner life? /BNC/: Չնայած այս նախադասություններում *penetrate* բայը գործածվում է հաստատական նախադասություններում, այնուամենայնիվ, որևէ կերպ նշված չէ՝ արդյոք նպատակն իրականացվել է, ներդրված ջանքն ու փորձը որևէ արդյունք է տվել: Այս համատեքստերը նույնպես հղում չեն անում հասկացման որևէ մակարդակի: Դա նշանակում է, որ հասկացման որևէ բարձր մակարդակ չի գրանցվում, հետևաբար ցուցայնության երկրորդ կենտրոնը ցուցայնության առաջին կենտրոնից որոշակի հեռավորության վրա է գտնվում: Այսինքն, այս բայով արտահայտված մտավոր շարժման հնարավոր վերջնակետը (*a deeper sense of universal evil, the situation, people's inner life*) ճշմարտության բացահայտման մի մասն է կազմում:

Ի տարբերություն վերոնշյալ օրինակների՝ բառարանային որոշ սահմանումների համաձայն՝ *penetrate* բայն արտահայտում է հասկացման այնպիսի տեսակ, որի դեպքում մտավոր շարժման ավարտին գործողության սուբյեկտի և ցուցայնության կենտրոնի (*Origo*₁) միջև ընկած հեռա-

վորությունը վերանում է, հետևաբար հասկացման գործընթացը տեղի է ունենում՝ *penetrate - succeed in understanding or gaining insight into; achieve understanding of, despite some obstacles*: Ընդ որում, այս բայով արտահայտված փոխաբերական ուղղահայաց շարժումը պահանջում է որոշակի ժամանակ. (19) *Therefore it took some time to penetrate the Boardrooms of British industry /BNC/*: Ինչպես երևում է վերոնշյալ օրինակից, որոշ ժամանակի առկայությունը *penetrate* բայի դեպքում թույլ է տալիս հասնել հասկացման որոշակի մակարդակի: Հասկացումը տեղի է ունենում, հետևաբար ցուցայնության սուբյեկտը և ցուցայնության կենտրոնը (Origo₁) վերացական տարածական իրականության մեջ որոշ խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարումից հետո նույն կետում են հայտնվում:

Համատեքստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն որոշակի նշորդներ, որոնց գործածությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել *penetrate* բային հատուկ հասկացման մակարդակի մասին: Դիտարկենք նմանատիպ որոշ գործածություններ՝ *the deeper we penetrate the future, they penetrate to the core, whose depth we must penetrate, penetrate to the real essences of things, penetrate beyond aesthetic appreciation, penetrate behind the scenes, penetrate further to the inner natures of things, penetrate deep within me*:

Բերված օրինակներից հետևում է, որ *deep, deeper, depth, to, beyond, behind, further* բառերը ուրվագծում են *penetrate* բայով արտահայտված հասկացման սահմանները: Նշենք, որ այդ կետերին հասնելու դեպքում անգամ, բացարձակ հասկացում՝ ճշմարտության ամբողջական բացահայտում, չի գրանցվում: Դրանց հասկացումը ընդհանուր նպատակի՝ ճշմարտության բացահայտման մի մասն է կազմում: Միաժամանակ, հիմնավորելով *penetrate* բայի ցուցայնությունը, պետք է նշել, որ *deep, deeper, depth, to, beyond, behind, further* բառերն այն նշորդներն են, որոնք հստակեցնում են Origo₂-ի դիրքը և, համապատասխանաբար, հեռավորությունը Origo₁-ից:

Առանձնացնենք *penetrate* բայի ևս մեկ առանձնահատկություն. եթե *fully, totally, completely, genuinely, truly, really, too much, more, more deeply, better, strongly, definitely* և նման այլ բառերի գործածությունը *empathize* բայի հետ թույլ էր տալիս եզրակացնել, որ *empathize*-ը արտացոլում է հասկացման առավելագույն մակարդակ, ապա նույնը չի կարելի ասել *penetrate* բայի մասին: *Penetrate* բայի համար այդ ցուցիչներն ավելի քիչ գործածական են:

Այսպիսով, *penetrate* բայի դեպքում գրանցվող հասկացման մակարդակը կարելի է բնութագրել որպես **«բավականին խորքային»**:

Այժմ անդրադառնանք *bottom* բայի և համարժեք *get to the bottom* դարձվածային արտահայտության ուսումնասիրությանը: *Bottom* բայը սահմանվում է որպես *discover the full meaning of*, որտեղ *full* ածականի առկայությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս բային հատուկ է հասկացման խորը մակարդակ: Հավաքագրված նյութում *get to the bottom* դարձվածային արտա-

հայտնությանը նախորդում են *promise, determine, must, want, will, would like* բայերը. (20) The police don't know who did the robbery yet, but they *promised to get to the bottom* of it; (21) We *must get to the bottom* of this problem immediately; (22) There is clearly something wrong here, and I *want to get to the bottom* of it; (23) Good idea! I'd *like to get to the bottom* of this. A glass of wine a day sounds good to me: Ինչպես երևում է բերված օրինակներից, հնարավոր չէ կռահել՝ արդյոք ապագայում կգրանցվի հասկացման որևէ մակարդակ: «Ապագայակենտրոնությանն» ավելանում է նաև բայի բացասականությունը. վերոնշյալ համատեքստերում, բացառությամբ (23)-ի, *bottom* բայը գուցորդվում է «բացասական» իրավիճակների հետ: Նշված երևույթն արտահայտված է նաև բառարանային սահմանումներից մեկում՝ *find out the true cause or explanation of a bad situation*:

Այնուամենայնիվ, գոյություն ունեն համատեքստեր, որոնք հղում են կատարում հասկացման մակարդակի առկայությանը. (24) I think that in that report I *bottomed the depths of human stupidity*, if *such a thing is possible* /BNC/; (25) The family *finally got to the bottom* of why their boy was killed /Cambridge Idioms Dictionary/:

Բերված համատեքստերը թույլ են տալիս եզրակացնել, որ գործողությունը որոշ դեպքերում ավարտվում է հաջողությամբ: Նշենք նաև, որ անգամ այս համատեքստերում *if such a thing is possible, finally* արտահայտությունները մատնանշում են *bottom* բայով արտահայտված հասկացման դժվարությունը: Ի համեմատություն *fathom* բայի՝ *bottom* բային հատուկ է հասկացման ավելի խորը մակարդակ, ի համեմատություն *penetrate* բայի՝ հասկացման ավելի ցածր մակարդակ: Հետևաբար, *bottom* բայով արտահայտված հասկացման մակարդակը կարող ենք բնութագրել որպես **«համեմատաբար խորքային»**:

Dig բայը որոշ չափով տարբերվում է վերոնշյալ բայերից, քանի որ ո՛չ ճշմարտության գաղափարը, ո՛չ խորության գաղափարը տեղ չեն գտնում բառարանային սահմանումներում: Այնուամենայնիվ, կան բառարաններ, որոնք *dig* բայը սահմանելով որպես *perceive and comprehend the nature and significance of; know and comprehend the nature or meaning of*, որոշ չափով ակնարկում են ճշմարտության բացահայտման մասին: Խոսելով *dig* բայով արտահայտված հասկացման մակարդակի մասին՝ նշենք, որ *American Heritage Dictionary*-ն այն սահմանում է որպես *understand fully*: *Macmillan Dictionary*-ն բերում է բայի գործածության այսպիսի օրինակ՝ (26) *I really dig their music*, հասկացման խորը մակարդակն ի հայտ է գալիս նաև այլ համատեքստերի միջոցով. (27) *We are going to dig deep and then we will dig deeper to find the truth* /BNC/; (28) *Digging deeper*, one can also recognize the long, racist history of the bellhop in early Americana /BNC/:

Խոսելով *dig* բայի մասին՝ նշենք նաև, որ այն համալիր հասկացման փուլերից մեկն է: Դա իր արտահայտությունն է գտնում տարբեր համատեքստերում՝ *digging deeper, thinking longer and harder; more than they can process*

and interpret: Բերված օրինակները ցույց են տալիս, որ *dig* բային հաջորդում են մտավոր այլ գործողություններ, որոնցից հետո միայն գրանցվում է լիարժեք հասկացում: Հավելենք նաև, որ նշված բայը հազվադեպ է գործածվում ժխտական նախադասություններում, ինչը նույնպես վկայում է հասկացման որոշակի մակարդակի մասին:

Deep, deeper, more, fully, really բառերի գործածությունը *dig* բայի համատեքստում թույլ է տալիս եզրակացնել, որ հասկացումը տեղի է ունենում մինչև այդ բառերով սահմանված կետերը: Այսպիսով, *deep, deeper, more, fully, really* բառերի գործածությունը վկայում է հասկացման խորը մակարդակի մասին: Ընդ որում հասկացման մակարդակը տարբեր ձևերով է արտահայտվում: Այս օրինակները համեմատելով օրինակ (29)-ի հետ՝ *They don't dig for truth as much as shape a desired version of it /BNC/*, կարելի է նկատել, որ եթե *dig deep, deeper, more, fully* բառակապակցություններում ընդգծված է ցուցայնության հետագծի (path) երկարությունը, ապա *dig for the truth* բառակապակցությունում ընդգծված է ցուցայնության կենտրոնը:

Գործածվելով *I, you* անձնական դերանունների հետ՝ *dig* բայը հաճախ հանդես է գալիս որպես խոսքի լրացում (conversation filler): Այդպիսի խոսքային իրավիճակներում նույնպես գրանցվում է հասկացման մակարդակ. (30) *You dig my meaning, man? /CALD, 2007/*; (31) *He looks at me a long time, like maybe I'm a real slow learner. "Yeah, I dig your meaning. That's exactly what I thought," I say, not wanting to show how dumb I am /BNC/*:

Ինչպես վերոնշյալ բայերին, *dig* բային նույնպես հատուկ է «ապագայակենտրոնությունը»: Այս բայով արտահայտված հասկացումը կարող է լինել «ապագայակենտրոն», ուստի պարզ չէ՝ արդյոք ապագայում այդ գործողությունը կհասնի հաջողության, արդյոք հասկացման որևէ մակարդակ կգրանցվի. (32) *Let's dig into the details and see what Kinder Morgan shareholders should expect when filing their 2014 taxes /BNC/*; (33) *Thus, to look for signs that the minimum wage is costing San Francisco jobs, we need to dig into the data /BNC/*:

Շարունակելով *dig* բայի քննարկումն՝ առանձնացնենք ևս մեկ կարևոր հատկանիշ: *Dig* բային հատուկ է ինչպես վերևից ներքև, այնպես էլ ներքևից վերև ուղղահայաց մտավոր շարժում: Առաջին դեպքում գործողության սուբյեկտը մի տարածական իրականությունից շարժվում է դեպի մեկ այլ տարածական իրականություն. (34) *"I see where you dig into my mind and come up with something," he said /BNC/*; (35) *At the same time, he foresees "a new enlightenment, a whole new renaissance" as more people dig into the primal meaning of Christianity and apply it in their lives /BNC/*:

Երկրորդ դեպքում այդ նույն շարժմանը գումարվում է նաև հակառակ ուղղությամբ շարժում: Այլ կերպ ասած՝ բացահայտված ճշմարտությունը/իմաստը վեր է հանվում դեպի մակերես՝ դեպի ելման կետ. (36) *...it was there that he discovered poetry from a welter of words in those plays; to dig out meaning from a nest of conventions /BNC/*; (37) *Mike Luckovich must*

have had to reach into his box of ink pens marked “misinformation” *to dig up the idea* for his most recent pictorial stereotype /BNC/:

Dig out meaning, dig up the idea բառակապակցությունները հաստատում են, որ մտավոր շարժումը բաղկացած է երկու փուլերից: Մտավոր շարժման երկրորդ փուլում ցուցայնության սուբյեկտն, ի տարբերություն (34), (35) օրինակների, այլ ելման կետում է գտնվում և ունի բոլորովին այլ ուղղվածություն: Համեմատելով *dig into* և *dig up, dig out* կառույցները՝ նկատելի է դառնում, որ առաջին դեպքում ցուցայնության կենտրոնը համընկնում է գործողության վերջնակետին, երկրորդ դեպքում՝ գործողության ելակետին:

Համադրելով համատեքստային գործածություններն ու բառարանային սահմանումները և օրինակները՝ կարող ենք եզրակացնել, որ *dig* բայով արտահայտված հասկացման այս մակարդակը տեղակայված է *empathize* և *penetrate* բայերի միջև, և այն բնութագրվում է որպես «խորքային»:

Այժմ անդրադառնանք *reach* հասկացում արտահայտող բայի ուսումնասիրությանը: Ինչպես ցույց է տալիս բազմաթիվ համատեքստերի քննությունը, *reach* բայը նկարագրում է և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական ուղղվածության մտավոր շարժում: Սակայն, հաշվի առնելով սույն հոդվածի նպատակները՝ *reach* բայը դիտարկվում է միայն որպես ուղղահայաց շարժում արտահայտող հասկացման բայ: Այն սահմանվում է որպես *succeed in achieving, succeed in having effect on*, որտեղ *succeed* բայի առկայությունը ակնարկում է գործողության հաջողության մասին: Ի դեպ, նշենք, որ ուսումնասիրված բառարանային սահմանումներից որևէ մեկը հղում չի կատարում խորությանը:

Համատեքստերի քննությունը ցույց է տալիս, որ խորության գաղափարը հաճախ է զուգորդվում *reach* բայով արտահայտված հասկացման հետ: Տարբեր համատեքստերում խորության գաղափարի արտահայտվածությունը հասկացման մակարդակի նշորդներից է, այն հատուկ է նաև *reach* հասկացում արտահայտող բային, որը հիմնավորվում է տարբեր համատեքստերում *to what depth, as deep as, deep within us, its maximum depth, the poetic depth, pretty deep for inspiration, deep levels of understanding, deep for the emotions, any deep insights, a deep understanding of* կապակցությունների առկայությամբ: Խորության այս աստիճանը սահմանում է տվյալ բայով արտահայտված հասկացման մակարդակը. (38) *If you look closely at that to what depth, to what depth do those senses reach in your church? /BNC/;* (39) *Times when we all get down in the dumps, but God can always reach deep within us and put us back on our feet again /BNC/:*

Բերված օրինակներում *reach* հասկացում արտահայտող բայը բացի ուղղահայաց շարժում արտահայտելուց, վերևից ներքև է ուղղված: Գոյություն ունի նաև *reach* բայով արտահայտված ներքևից վերև ուղղվածությամբ հասկացում. (40) *Ascending Moses' mountain to reach God made spirit-*

ual sense to me in a way talking prayers rarely do (=God is considered to be up, that's why in order to understand God, people have to ascend) /BNC/:

Հատկանշական է, որ ուսումնասիրված բացատրական բառարաններից միայն *vocabulary.com* և *rhymezone.com* էլեկտրոնային ռեսուրսներն են *reach* բայը սահմանում՝ ակնարկելով ներքևից վերև շարժման մասին՝ *move upward in order to touch; also in a metaphorical sense: Reach* բային հատուկ է ինչպես գործողության սուբյեկտից դեպի ճշմարտություն (41), (42), այնպես էլ ճշմարտությունից դեպի գործողության սուբյեկտ (43), (44) շարժումը.

(41) Students *reach deep levels of understanding* when they compose similar songs, improvise accompaniments for the songs, and critique the composition process /BNC/; (42) Each partner must *reach a deep understanding* of what was truly irreconcilable about past behavior /BNC/: Այս օրինակներում հասկացումը պայմանավորված է սուբյեկտի ակտիվությամբ:

(43) The movie doesn't *reach any deep insights*, but its mixture of psychology, philosophy, and realpolitik is downright riveting (=After watching the movie people don't understand the essence/content of the movie/The essence/content of the movie does not reach people) /BNC/; (44) It would unfold even those arts most distant in time and space, and the art-history picture would *reach its maximum depth* of field and optimal focus at such points as ancient China (=People will totally understand the essence/content of the art-history picture. The essence/content of the art-history picture reaches people) /BNC/: Այս օրինակներում հասկացումը պայմանավորված է խորքային օբյեկտ – մակերեսային սուբյեկտ հարաբերությամբ և դրանց բովանդակության ակտիվությամբ: Դա նշանակում է, որ ոչ թե գործողության սուբյեկտն է մտավոր շարժում կատարում դեպի ճշմարտություն (ցուցայնության կենտրոն Origo₁), այլ ճշմարտությունն է «շարժվում», հանգում «ցուցայնության սուբյեկտին»:

Reach բայի այս կարևորագույն հատկանիշին անդրադարձ է կատարվում *McGraw-Hill Dictionary of American Idioms and Phrasal Verbs* բառարանում: Ի տարբերություն այլ բառարանների՝ վերջինս հասկացման գաղափարը սահմանում է հետևյալ կերպ՝ *manage to be understood by someone; have one's message appreciated by someone` (45) If we could only reach them with our message, we might be able to convince them to stay in school* (=If we manage to be understood by them/If they understand us, our message/It's the content of the message which should reach them):


Առանձնացնենք *reach* բայի գործածության այլ համատեքստեր, որոնք ևս վկայում են այն մասին, որ գրանցվում է հասկացման մակարդակ՝ *reach its full meaning; beyond all imagination; beyond the constraints of discourse; into the minds and thoughts of another person; into his mind; any further than that*: Նշենք նաև, որ *reach* բայով արտահայտված հասկացման մակարդակը, ի տարբերություն *empathize* բայի, սահմանափակվում է *beyond, into, further* և այլ մնանատիպ բառերով, որոնց միջոցով նախանշվում է շարժման վերջնակետը՝

ցուցայնության երկրորդ կենտրոնի (Origo₂) դիրքը: Հասկացման որևէ մակարդակ այդ կետերից դուրս չի գրանցվում: Ի տարբերություն *dig* բայի՝ *reach* ավելի շատ է հակված կիրառվելու ժխտական և «ապագայակենտրոն» նախադասություններում, ուստի *reach* բայով արտահայտված հասկացման մակարդակը բնութագրենք որպես «չափավոր խորքային»:

Որպես ամփոփում նշենք, որ ստացված արդյունքների իսկությունը ստուգելու նպատակով ուսումնասիրվել են հարյուրավոր նախադասություններ: Յուրաքանչյուր բայի համար որոշվել է ժխտական և հաստատական նախադասություններում կիրառության հաճախականությունը: Կարող ենք եզրակացնել, որ այն նշորդները, որոնց շնորհիվ սահմանվել է բայերի հասկացման մակարդակը, ուղղակիորեն կախված են ժխտական և հաստատական նախադասություններում գործածության հակվածությունից: Դա նշանակում է, որ հասկացում արտահայտող բայերի՝ հաստատական նախադասություններում գործածության հաճախականությունը նախանշում է հասկացման մակարդակը:

Ուսումնասիրված բայերին հատուկ են էմպատիայի տարբեր մակարդակներ, ինչպես նաև ցուցայնության տարբեր աստիճաններ: Կախված ցուցայնության սուբյեկտի հետագծի երկարությունից՝ սահմանվում է գործողության ավարտին գործողության սուբյեկտի զբաղեցրած դիրքը «ճշմարտության շերտերից» որևէ մեկում: Էմպատիայի՝ նվազագույնից առավելագույնը դրսևորվածությունը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ (տե՛ս սխ. 1)՝ *fathom*, *bottom*, *penetrate*, *reach*, *dig*, *empathize*:

Սխեմա 1



Հավաքագրված տվյալները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող բայերը գտնվում են վերանվանական (hyperonymic) իմաստային հարաբերությունների մեջ: Տվյալ դեպքում *empathize* բայը վերանունություն (hyperonym) է մնացած բոլոր բայերի համար: Ելնելով այս դրույթից՝ կարող ենք նշել, որ *empathize* բայը, փոխաբերաբար արտահայտվելով, այն ցուցայնության կենտրոնն է, որի հետ հարաբերվում են *fathom*, *bottom*, *penetrate*, *reach*, *dig* բայերը: Նույն կերպ *dig* բայը ևս կարող է ստանձնել ցուցայնության կենտրոնի դերը, որի հետ համապատասխանաբար հարաբերվում են *fathom*, *bottom*, *penetrate*, *reach* բայերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bühler K. Theory of Language: the Representational Function of Language. Amsterdam, the Netherlands: John Benjamins Publishing Company, 2011.
2. Croft W., Cruse D. A. Cognitive Linguistics. Cambridge: Cambridge University Press, 2004.
3. Kuno S. Functional Syntax: Anaphora, Discourse and Empathy. Chicago: University of Chicago Press, 1987.
4. Lakoff G., Johnson M. Metaphors We Live by. London: the University of Chicago Press, 2003.
5. Апресян Ю.Д. Избранные труды, том 2: Интегральное описание языка и системная лексикография. Москва: Школа “Языки русской культуры”, 1995.
6. Ерзинкян Е.Л. Дейктическая семантика слова. Ереван: Издательство Ереванского университета, 1988.
7. Ерзинкян Е.Л. Дейксис слова: семантика и прагматика. Ереван: Издательство ЕГУ, 2013.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Cambridge Dictionary of American Idioms. Cambridge University Press, 2003 // URL: <http://idioms.thefreedictionary.com/>
2. Cambridge Idioms Dictionary, 2nd edition. Cambridge University Press, 2006 // URL: <http://idioms.thefreedictionary.com/>
3. Cambridge Advanced Learner's Dictionary, 3rd edition. Cambridge University Press, 2007 (CALD) // URL: <http://dictionary.cambridge.org/>
4. Cambridge Academic Content Dictionary. Cambridge University Press, 2008 (CACD) // URL: <http://dictionary.cambridge.org/>
5. Collins English Dictionary, 7th edition. Glasgow: Harper Collins Publishers, 2007 // URL: <http://www.collinsdictionary.com/>
6. E. Cobham Brewer 1810–1897 Dictionary of Phrase and Fable, 1898 // URL: <http://www.bartleby.com/>
7. Farlex Dictionary of Idioms. Farlex, Inc., 2015 // URL: <http://idioms.thefreedictionary.com/>
8. McGraw-Hill Dictionary of American Idioms and Phrasal Verbs. The McGraw-Hill Companies, Inc., 2002 // URL: <http://www.idioms.thefreedictionary.com/>
9. Oxford Dictionary of English, 2nd ed., Revised / Soames C., Stevenson A. (eds.) Oxford: Oxford University Press, 2009 (OED) // URL: <http://www.oxforddictionaries.com/>

10. Random House Unabridged Dictionary, Random House, Inc., 1997 // URL: <http://www.dictionary.infoplease.com/>
11. Random House Kernerman Webster's College Dictionary, Random House, Inc., 2005, 1997, 1991 // URL: <http://www.thefreedictionary.com/>
12. Random House Dictionary, Random House, Inc., 2015 // URL: <http://www.dictionary.reference.com/>
13. The American Heritage Dictionary of the English Language, 4th edition. Houghton Mifflin Harcourt Publishing Company, 2000 // URL: <https://www.ahdictionary.com/>
14. Webster's American Dictionary of the English Language (1828 Facsimile Edition). Foundation for American Christian Education, 1967 // URL: <https://www.1828.mshaffer.com/>
15. WordNet 3.0 Thesaurus, Farlex Clipart Collection. Princeton University, Farlex Inc., 2003-2008.
16. English Idioms // URL: <http://www.idioms4you.com/>
17. British National Corpus // URL: <http://corpus.byu.edu/bnc/>

Ե. ԵՐԶԻՆԿՅԱՆ, Դ. ՄՈՎՏԻՏՅԱՆ – *Понимание, ментальное движение, дейксис*. – В данной статье глаголы понимания рассматриваются как средства обозначения ментального движения. Выявленный в семантике указанных глаголов компонент вертикального движения, а также контекстуальные маркеры «степени понимания» обосновывают дейктичность данных глаголов.

Ключевые слова: эмпатия, понимание, степень понимания, глубина понимания, дейксис, дейктический центр, ментальное движение, вертикальное движение, истина, когнитивная метафора

Y. YERZINKYAN, D. MOVSISYAN – *Understanding, Mental Movement and Deixis*. – The paper deals with the study of understanding as mental movement. Taking into account the component of vertical movement in the semantics of these verbs, the the deictic center in the mental movement is located via markers denoting the depth of understanding. Hence, the deictic character of the verbs is grounded.

Key words: empathy, understanding, level of understanding, depth of understanding, deixis, deictic center, mental movement, vertical movement, truth, cognitive metaphor